ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7 »

ք. Երևան «12» 02 2025թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեգնա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուբեն Դարբինյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **ընդհանուր առավելագույն գինը** կազմում է **4100000 (չորս միլիոն հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդ որում,

1-ին չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է **2000000** (երկու միլիոն) ՀՀ դրամ

2-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է **2100000** (երկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ **փաստացի մատուցված ծառայության դիմաց**: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի /ըստ չափաբաժինների/ առաջարկած հանրագումարային գինն է.
1-ին չափաբաժնի համար՝ 1063599 (մեկ միլիոն վաթսուներեք հազար հինգ հարյուր ինսունինը),
2-րդ չափաբաժնի համար՝ 1587100 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հարյուր):

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	<<Մեգնա>> ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 13	Հասցե: ք.Երևան Աճառյան 42
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ՝ 00083019
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝Արդշինինվեստ բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011556355	Հ/Հ 21700208058800 1
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայություն							
Չափ./համար	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցում	
						Հասցեն	Ժամկետը
1	50111130/6	8 հատ **Renault Megane** (բոլորն էլ արտադրված են 2022 թ-ին) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և երկու աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: Ծառայությունը մատուցվում է թերությունների ակտի ներկայացումից հետո՝ պատվիրատուի գրավոր համաձայնությամբ: Կատարողի կողմից տրվում է 6 ամիս կամ 10000կմ երաշխիք փոխարինված դետալների և ծառայության համար: Հիմնական նորոգում անցած հանգույցի շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 20000 կմ: Յուրաքանչյուր սպասարկումից հետո 2 ախատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացվի կատարված աշխատանքի հարկային հաշիվը, արձանագրությունն ու ակտը: Եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-րդ օրը պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքի և դուրս գրված հաշիվների վերաբերյալ, իսկ 4-րդ եռամսյակի դեպքում մինչև դեկտեմբերի 20-ը: *Սպասարկման կենտրոնը պետք է գտնվի Երևան քաղաք վարչական տարածքում:*	Դրամ	2000000	1	ք. Երևան, Նալբանդյան 13	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 26.12.2025թ**
2	50111130/7	10 հատ **Renault Kaleos** (բոլորն էլ արտադրված են 2023 թ-ին) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի	Դրամ	2100000	1	ք. Երևան, Նալբանդյան 13	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 26.12.2025թ**

		տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և երկու աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: Ծառայությունը մատուցվում է թերությունների ակտի ներկայացումից հետո՝ պատվիրատուի գրավոր համաձայնությամբ: Կատարողի կողմից տրվում է 6 ամիս կամ 10000կմ երաշխիք փոխարինված դետալների և ծառայության համար: Հիմնական նորոգում անցած հանգույցի շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 20000 կմ: Յուրաքանչյուր սպասարկումից հետո 2 ախատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացվի կատարված աշխատանքի հարկային հաշիվը, արձանագրությունն ու ակտը: Եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-րդ օրը պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքի և դուրս գրված հաշիվների վերաբերյալ, իսկ 4-րդ եռամսյակի դեպքում մինչև դեկտեմբերի 20-ը: Սպասարկման կենտրոնը պետք է գտնվի Երևան քաղաք վարչական տարածքում:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգնա>> ՍՊԸ
Հասցե: ք.Երևան Աճառյան 42
ՀՎՀՀ՝ 00083019
Բանկ՝Արդշինինվեստ բանկ ՓԲԸ
Հ/Հ 21700208058800 1

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«12» 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման

/վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները և պայմանագրով հաստատված առավելագույն գները/

Հ/Հ	Պահեստամասեր և աշխատանք	Չափաբ. 1 Renault Megane	Չափաբ. 2 Renault Kaleos
		CPV 50111130/6	CPV 50111130/7
1	Շարժիչի յուղ	7800	7800
2	Շարժիչի յուղի զտիչ	7200	7200
3	Շարժիչի յուղի և յուղի զտիչի փոխարինում	7500	7500
4	Շարժիչի օդի զտիչ	9600	18000
5	Շարժիչի օդի զտիչի փոխարինում	3000	3000
6	Սրահի օդի զտիչ	12000	12000
7	Սրահի օդի զտիչի փոխարինում	3000	3000
8	Առջևի արգելակման կոճղակներ	66000	60000
9	Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	7500	7500
10	Հետևի արգելակման կոճղակներ	30000	60000
11	Հետևի արգելակման կոճղակների փոխարինում	10500	10500
12	Վառոցքի մոմեր /4 հատ/	24000	91200
13	Վառոցքի մոմերի փոխարինում	15000	15000
14	Անվաբացքի ուղղում	12000	12000
15	Անվադողերի փոխարինում /4 հատ/	4000	4000
16	Անվադողերի բալանս /4 հատ/	6000	6000
17	Լծակ աջ	65000	62400
18	Լծակ ձախ	65000	62400
19	Լծակի փոխարինում	15000	15000
20	Առջևի հարվածամեղմիչ	42000	48000
21	Հարվածամեղմիչի փոխարինում	12000	12000
22	Հետևի հարվածամեղմիչ	36000	
23	Կայունարարի կանգնակ	33600	24000
24	Կայունարարի կանգնակի փոխարինում	7500	7500
25	Առջևի արգելակման սկավառակների հավաքածու	61200	84000
26	Առջևի սկավառակների փոխարինում	15000	15000
27	Հետևի արգելակման սկավառակների հավաքածու	120000	108000
28	Գեներատորի փոկ	36000	19200
29	Փոկի փոխարինում	12000	12000
31	Անվակունդի փոխարինում	15000	15000
32	Ապակեմաքրիչների կոմպլեկտ		34000
33	Փոխանցման տուփի հենակ	30000	310000
34	Փոխանցման տուփի հենակի փոխարինում	15000	15000
35	Շարժիչի աջ հենակ		74000
36	Շարժիչի աջ հենակի փոխարինում		13500
39	Ջրի պոմպ	40000	67200
40	Ջրի պոմպի փոխարինում	48000	48000
41	Թերմոստատ	12000	32000
42	Շարժիչի հովացնող հեղուկ (1լ)	4199	4200

43	Շարժիչի հովացնող հեղուկի փոխարինում	24000	24000
46	Արգելակման հեղուկ	4000	4000
47	Կամբդա տվիչ	90000	116000
48	Կամբդա տվիչի փոխարինում	15000	15000
50	Ապակի մաքրելու հեղուկ /5լ/	21000	21000
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	**1063599**	**1587100**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգնա>> ՍՊԸ

Հասցե: ք.Երևան Աճառյան 42

ՀՎՀՀ՝ 00083019

Բանկ՝Արդշինինվեստ բանկ ՓԲԸ

Հ/Հ 2170020805880001

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 12 » « 02 » 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7 » ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբ. համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/6	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	400,000	400,000	400,000	900,000	900,000	900,000	1,400,000	1,400,000	1,400,000	2000000	2000000	2000000	2000000
2	50111130/7	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	420,000	420,000	420,000	945,000	945,000	945,000	1,470,000	1,470,000	1,470,000	2100000	2100000	2100000	2100000

/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգնա>> ՍՊԸ
Հասցե: ք.Երևան Աճառյան 42
ՀՎՀՀ՝ 00083019
Բանկ՝Արդշինինվեստբանկ ՓԲԸ
Հ/Հ 217002080588001

/ստորագրություն/Կ.Տ

Հավելված 3
«12» 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«12» 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն